ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-37

ք. Երևան «05» 02 2025 թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը

ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում 'պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5 000 000 (հինգ միլիոն)** ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց

առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	«Կարկոմ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 130	**հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**Բանկ՝ Ակբա բանկ**
գործառնական վարչություն	**Հ/Հ 220453330395000**
Հ/Հ 900011042471	**ՀՎՀՀ 00141987**
ՀՎՀՀ 02882913	**Հեռ. 374 96 924 104**
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ: Sto.karcomauto@rambler.ru**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
Ա. Ֆիդանյան	**Գ. Մարգարյան /տնօրեն /**
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/	**(ստորագրություն)**
(ստորագրություն)	**Կ.Տ**
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 05 » 02 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-37 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում CPV 50111130/6	Ըստ հավելված 1.1-ի	դրամ	5 000 000	1	ք. Երևան Ծ. Իսակովի 7	Պայմանագիրը ուժի մտնելուց հետո

Հավելված 1.1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանումը	**Տեխնիկական բնութագիրը և այլ պահանջները**
Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	<<Մուրան>> ՍՊԸ-ից 2023թ. ընթացքում ձեռք բերված <<Միցուբիշի>> մակնիշի տրանսպորտային միջոցների երաշխիքային սպասարկման ծառայություն/ ավտոմեքենաների տվյալները տես ստորև ներկայացված աղյուսակում
Պարտադիր պայման	Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված, գործարանային արտադրության և <<Միցուբիշի>> ֆիրմայի

Հ/h	Ծառայությունների անվանումներ	Չ/մ	Mitsubishi L 200
1	Համակարգչային ախտորոշում	հատ	5050
2	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	հատ	20200
3	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	հատ	121200
4	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	80800
5	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	55550
6	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	հատ	55550
7	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	հատ	5050
8	Հանգույցների յուղում	հատ	2020
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
9	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	3030
10	Օդի զտիչի փոխարինում	հատ	2020
11	Օդորակիչի զտիչի փոխարինում	հատ	3030
12	Վառելանյութի մղիչի հանում և տեղադրում	հատ	10100
13	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	հատ	10100
14	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	15150
15	Ակսելերատորի հանում և տեղադրում	հատ	5050

16	Ակսելերատորի ադապտացում	հատ	5050
17	Ակսելերատորի մաքրում	հատ	3030
	3. Սառեցման և արտածման համակարգ		
18	Փոկի հանում և տեղադրում	հատ	5050
19	Հովհարի հանում և տեղադրում	հատ	10100
20	Ռադիատորի հանում և տեղադրում	հատ	15150
21	Ռադիատորի վերանորոգում	հատ	30300
22	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում	հատ	60600
23	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	հատ	60600
24	Թերմոստատի փոխարինում	հատ	15150
25	Ջրի պոմպի փոխարինում	հատ	30300
26	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	5050
27	Խլարարի հանում և տեղադրում	հատ	5050
28	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	5050
29	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	5050
30	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	5050
31	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	10100
	4. Կախոց		
32	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	30300
33	Դիմացի կամրջակի բարձիկի փոխարինում	հատ	10100

34	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	հատ	10100
35	Փոխանցման տուփի բարձիկի հանում և տեղադրում	հատ	10100
36	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	հատ	10100
37	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	10100
38	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	2020
39	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	7575
40	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	7070
41	Ներքևի լծակի վռանի փոխարինում	հատ	1515
42	Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	5050
43	Վերևի լծակի վռանի փոխարինում	հատ	1515
44	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	հատ	5050
45	Գնդե հոդակապերի փոխարինում	հատ	5050
46	Ձգանի ծայրակալի հանում և տեղադրում	հատ	3030
47	Կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	6060
48	Հետևի զսպակի հանում և տեղադրում	հատ	10100
49	Հետևի զսպակի վռանի փոխարինում	հատ	1010
50	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5050
51	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	2525

52	Կցորդման սկավառակների հանում և տեղադրում	հատ	80800
53	Կցորդման սկավառակների նորոգում	հատ	90900
54	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	2525
55	Անվաբացքի կարագավորում	հատ	12120
	5. Ղեկային մեխանիզմ		
56	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	30300
57	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	90900
58	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	25250
59	Ղեկային ձողի նորոգում	հատ	20200
60	Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում	հատ	5050
	6. Արգելակային համակարգ		
61	Արգելակային համակարգի օդահանում	հատ	4040
62	Սուպորտի հանում և տեղադրում	հատ	5050
63	Սուպորտի վերանորոգում	հատ	5050
64	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	3030
65	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	3030
66	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	10100
67	Առջևի արգելակային սկավառակի հանում և տեղադրում	հատ	5050

68	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5050
69	Արգելակային սկավառակի հղկում	հատ	6060
70	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	հատ	5050
71	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	3030
	7. Էլեկտրասարքավորում		
72	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	8080
73	Լապտերի լամպի փոխարինում	հատ	2020
74	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	3030
75	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	2525
76	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	3030
77	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	6060
78	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	18180
	8. Այլ ծառայություններ		
79	Անիվի հանում և տեղադրում	հատ	505
80	Անվադողի քանդում և հավաքում	հատ	1010
81	Անիվի հավասարակշռում	հատ	1010
82	CO-զոդման աշխատանքներ	սմ	1010
83	Խառատային աշխատանքներ	կտոր	5050
84	Փականագործի աշխատանքներ	ժամ	8080
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		Mitsubishi L 200

	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1	Յուղ շարժիչի սինթետիկ	լիտր	5050
2	Յուղի զտիչ	հատ	5252
3	Շարժիչի կափույրի միջադիր	հատ	7272
4	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	18545
5	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկ	հատ	8484
6	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկ	հատ	6060
7	Շարժիչի ատամնավոր փոկ	հատ	29088
8	Ատամնավոր փոկի ձգող հոլովակ	հատ	14544
9	Ատամնավոր փոկի ազատ հոլովակ	հատ	10908
10	Շարժիչի յուղի պոմպի ատամնավոր փոկ	հատ	25452
11	Վառոցքի մոմ	հատ	9696
12	Վառելանյութի մղիչ	հատ	146652
13	Վառելանյութի փողրակ	հատ	30300
14	Օդի զտիչ	հատ	25452
15	Օդորակիչի զտիչ	հատ	5050
16	Յուղի տվիչ	հատ	7272
17	Մաքրող հեղուկ ABRO	հատ	2020
-	2. Սառեցման և արտաթծման համակարգ	-	-
18	Ռադիատոր	հատ	219372
19	Ընդարձակող բաք	հատ	18180

20	Հովացման համակարգի փողրակ	հատ	25250
21	Թերմոստատ	հատ	11514
22	Ջրի պոմպ	հատ	67872
23	Սառեցման հեղուկ	լիտր	3030
24	Գեներատորի փոկ	հատ	9696
25	Կրոնշտեյն	հատ	15150
26	Անուր (Խամուտ)	հատ	1010
27	Վառարանի ռադիատոր	հատ	155135
28	Վառարանի շարժիչ	հատ	111504
29	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	12120
30	Հերմետիկ	հատ	3030
	3. Կախոց		
31	Շարժիչի աջ բարձիկ	հատ	30300
32	Փոխանցման տուփի բարձիկ	հատ	73932
33	Փոխանցման տուփի բարձիկ հեծանի	հատ	15756
34	Դիմացի կամրջակի բարձիկ	հատ	12120
35	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	հատ	39996
36	Անվակունդի առանցքակալ	հատ	50904
37	Հարվածամեղմիչի թասակ	հատ	27876
38	Ձսպակի վռան	հատ	2424
39	Առջևի ցնցամեղմիչ	հատ	88476

40	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	6060
41	Ներքևի լծակի վռան	հատ	11514
42	Վերևի լծակի վռան	հատ	10302
43	Գնդե հոդակապ	հատ	35148
44	Առջևի կայունարարի վռան	հատ	4242
45	Կայունարարի կանգնակ	հատ	21816
46	Հետևի ցնցամեղմիչ	հատ	77568
47	Աջ կամ ձախ ձգան	հատ	32118
48	Ձգանի ծայրակալ	հատ	23634
49	Ձգանի փոշեթիկնոց	հատ	9090
50	Կցորդման տարվող սկավառակ	հատ	87264
51	Կցորդման տանող սկավառակ	հատ	90900
52	Կցորդման առանցքակալ	հատ	19998
53	Հետևի կարդանային լիսեռի խաչուկ	հատ	25452
54	Ղեկային կալունի վերանորոգման հավաքածու	հատ	59388
55	Հիդրոուժեղարարի փոկ	հատ	23028
56	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	10100
57	Քսայուղ լիտոլ 100 գրամ	հատ	1010
58	Քսայուղ Շռուս 100 գրամ	հատ	1818
	4. Արգելակային համակարգ		
59	Արգելակային փողրակ	հատ	15756

60	Սուպպորտի վերանորոգման հավաքածու	հատ	14544
61	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	56964
62	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	56964
63	Առջևի արգելակային սկավառակ	հատ	100596
64	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	119988
65	Արգելակային հեղուկ	հատ	4040
	5. Էլեկտրասարքավորում		
66	Լամպ	հատ	3030
67	Էլեկտրական անջատիչ	հատ	3030
68	Վառոցքի կոճ	հատ	47874
69	Ապակելվացիչ	հատ	4040
70	Ապակելվացիչի հեղուկ	լիտր	3030
71	Մարտկոց	հատ	55550

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1
Բանկ՝ Ակբա բանկ
Հ/Հ 220453330395000
ՀՎՀՀ 00141987
Հեռ. 374 96 924 104
Էլ. Փոստ: 6to.karcomauto@rambler.ru

_____ Գ. Սարգսյան /տնօրեն /
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«05» 02 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-37 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/6	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		2 500 000	2 500 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	5 000 000	**5 000 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Կարկոմ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1
Բանկ՝ Ակբա բանկ
Հ/Հ 220453330395000
ՀՎՀՀ 00141987
Հեռ. 374 96 924 104
Էլ. փոստ: Sto-karcomauto@rambler.ru

Գ. Սարգսյան /տնօրեն /
(ստորագրություն)
Կ.Տ)

Հավելված 3
« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-37 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ՝ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 2025 թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-37 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ _-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն